

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո 7

« Ընապահականության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանի մոտ կայացած
« Ընտրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»
« Կառավարության որոշման նախագծի հանրային քննարկման

ք. Երևան
14.08.2014թ.

Ժամը 11:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Խ. Խաչատրյան « Ընապահականության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի Ժ/պ,
- Ն. Ալավերդյան « Ընապահականության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ,
- Ա. Վարդանյան « Ընապահականության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,
- Վ. Սահակյան « Ընապահականության նախարարության «Բնապահականական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի տնօրեն,
- Ա. Դոնոյան « Ընապահականության նախարարության «Բնապահականական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ,
- Ա. Գասպարյան «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ,
- Մ. Երիցյան «Էկոլոյ» տեղեկատվական ՀԿ-ի ներկայացուցիչ,
- Մ. Ղասաբյան «Թռչունների պահպանության միություն» ՀԿ-ի նախագահ,
- Ե. Մանվելյան «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ,
- Գ. Օգանեզովա «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-ի նախագահ,
- Լ. Ներսեսյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ,
- Գ. Ֆայվուշ «Բնության իրավունքի պաշտպանության» ՀԿ-ի նախագահ,
- Ժ. Վարդանյան «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի նախագահ,
- Ք. Հովհաննիսյան «Բնապահականական և կայուն արտադրության ու սպառման ոլորտի խումբ» ՀԿ-ի նախագահ,
- Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ-ի նախագահ,
- Ա. Վերմիշյան Բնապահական-փորձագետ,
- Տ. Կոստանյան Համաշխարհային բանկի ներկայացուցիչ,
- Ն. Վարդանյան «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի նախագահ:

Օրակարգում՝

« Ընտրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»
« Կառավարության որոշման նախագծի քննարկում:

Բացման խոսքով հանդես եկավ « Ընապահականության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանը: Նա նշեց, որ «Ընտրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» « Կառավարության որոշման նախագիծը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» « օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերից առաջինն է: Նա ընդգծեց նաև, որ մյուս ենթաօրենսդրական ակտերը նույնպես կընդունվեն՝ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցելով և հաշվի առնելով նրանց առաջարկություններն ու դիտողությունները: Ս. Պապյանը շեշտեց, որ նոր

ընդունված օրենքը մեկ քայլ առաջ է նախկին օրենքից՝ հատկապես Օրհուսի կոնվենցիայի դրույթների կատարման առումով:

<<Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Կարգ) քննարկման մասնակիցներին ներկայացրեց ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ **Ա. Դռնոյանը**:

Առաջարկություններ և դիտողություններ

Ա. Գասպարյանը

1. նշեց Կարգով նախատեսված լուսմներին մարդկանց մասնակցության մեխանիզմի բացակայությունը,
2. ընդգծեց, որ պարզ չէ թե Կարգում նախատեսված <<Բացասական եզրակացություն>> եզրույթն ինչ է նշանակում:
3. Կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարության մեջ նշել՝ լուսմներ կազմակերպողի էլ փոստի հասցեն և հեռախոսը, ինչով կապահովվի հետադարձ կապը,
4. Կարգի 12-րդ կետում խմբագրել <<պատասխանատուի պաշտոնական կայքում>> բառերը,
5. Կարգի 17-րդ կետը լրացնել այնպես, որ լուսմների արձանագրությունը ստորագրի նաև լուսմները կազմակերպողը,
6. Կարգի 19-րդ կետից հանել <<գրավոր և բանավոր>> բառերը:

Ն. Վարդանյանը

1. Ի՞նչպես է հաշվի առնվելու հանրության կարծիքը,
2. Ինչպես է , կամ ով է ընտրում ազդակիր համայնքը կամ համայնքները,
3. համապատասխանեցնել Կարգի 3-րդ և 15-րդ հոդվածները,
4. լրամշակել Կարգի 45 և 46 հոդվածները,
5. վերանայել Կարգի 11-րդ հոդվածով նախատեսված ժամկետները,
6. խմբագրել Կարգի 4-րդ կետում նշված <<ուչ ուչ քան 2 օր առաջ>> բառերը,
7. Կարգի մեջ ավելացնել այն գաղափարը, որ եթե լուսմների արձանագրությանը չի կցվում տեսաձայնագրությունը, համարել անվավեր:
8. խմբագրել Կարգի 21-րդ կետը հանել <<իսկ >> բառը, և պարտադիր պահաջ ձևակերպել կենտրոնի կայքում տեղադրելը,
9. հստակեցնել Կարգի 27-րդ կետը,
10. խմբագրել Կարգի 28-րդ կետը,
11. Կարգում ավելացնել կետ, որը կնախատեսի դատական բողոքարկման մեխանիզմներ:

Տ. Կոստանյանը

1. խմբագրել Կարգի 4-րդ կետում նշված ժամկետները,
2. Կարգում ավելացնել դրույթ, համաձայն որի լուսմները կարող են տեսաձայնագրել ցանկացած այլ կազմակերպություններ կամ ֆիզիկական անձինք:

Ա. Իսկոյան

1. Կարգում ավելացնել լուսմների համապատասխան մասնագետների մասնակցելու համար անհատական հրավերներ ուղարկելու մասին դրույթ:

Ա. Վերմիշյան

1. Կարգը լրացնել բնապահպանական փորձաքննության ներկայացված նյութերի, դրանց հանրային լուսմների արձանագրությունների և տեսաձայնագրման նյութերի պահպանման, արխիվացման և հետագայում դրանց օգտագործման մասին դրույթներով:

Գ. Օգանեզովա

1. Ինչպես ապահովել լուսմների մասին ինֆորմացիայի հասանելիությունը համայնքի բնակիչներին:

Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Վ Ե Ց

1. Վ. Սահակյանին, Ա. Դոնոյանին՝

- 1-շաբաթյա ժամկետում լրամշակել <<Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, հիմք ընդունելով քննարկման ընթացքում հնչեցված և էլեկտրոնային փոստով ստացված առաջարկություններն ու դիտողությունները:

2. Ա. Վարդանյանին՝

- Կարգի լրամշակելուց հետո, ներկաների հետ, կազմակերպել հանդիպում, լրամշակված Կարգը մեկ անագմ ևս քննարկելու նպատակով:

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ս. ՊԱՊՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ալավերդյան